

ՍԵՐՈ ԽԱՆՁԱԳԻՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԵՄԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գրականությունը խոսքի արվեստ է, որ գոյծ ունի լեզվի հետ, բառերի հետ: Լեզուն գրողի գեներն է, ինչպես նկարչի համար գույնն ու վրձինը, երաժշտի համար հնչյունը, ձայնը: Երկի գեղարվեստական կատարելության չափանիշը ոչ միայն կյանքի ճշմարտացի պատկերումն է, այլև արտահայտչամիջոցների ամբողջությունը, համակարգը, կառուցվածքը, գրողի լեզուն և ոճը: Հետևաբար գեղարվեստական գրականության ուսումնասիրությունն անհնար է առանց նրա լեզվաոճական, արտահայտչական առանձնահատկությունների բացահայտման: Ահա ինչու դարեր շարունակ գեղարվեստական գրականությունն ստեղծող ու նրա ուսումնասիրությամբ զբաղվող մարդիկ անպայման անդրադառնում են նաև գրողի լեզվաոճական առանձնահատկություններին՝ գրողին գնահատելով նաև այդ տեսանկյունից, այլ խոսքով՝ ձևի և բովանդակության միասնականության մեջ,

Հայ գրական պանթեոնում իրենց արժանի տեղն ունեն Ռաֆֆու, Մուրացանի, Ստ. Զորանի և Ռ. Դեմիրճյանի նշանավոր պատմավեպերը, որոնց լեզվական արվեստի օրինաչափություններն ուսումնասիրված են արդեն: Մեր նպատակն է ուսումնասիրել ժամանակակից հայ պատմավիպասանության դեմքերից մեկի՝ Սերո Խանգադյանի պատմավեպերի («Մխիթար Սպարապետ», «Ծուշի», «Թագուհին հայոց» և «Խոսեք, Հայաստանի լեռներ») լեզուն և ոճը:

«Մխիթար Սպարապետ» պատմավեպը նվիրված է 18-րդ դարի հայ ազատագրական շարժումներին՝ Դավիթ Բեկի և նրա զորավարների հերոսական մարտումներին: Այս թեմայի շարունակությունն է «Ծուշի» պատմավեպը: «Թագուհին հայոց» պատմավեպը նվիրված է հայոց պատմության հնագույն ժամանակներին: «Խոսեք, Հայաստանի լեռներ» պատմավեպն անդրադառնում է մեր դարասկզբի հայ ժողովրդի կյանքի ողբերգական անցքերին՝ Մեծ Եղեռնի դեպքերին: Ս. Խանգադյանն իր ստեղծագործություններով հաստատում է այն գաղափարը, որ մարդը հայրենիքով, հայրենի երկրով, հողի հետ ունեցած սրբազան կապերով է արդարացնում մարդու բարձր կոչումը:

Գեղարվեստական երկի լեզվի բնութագրման համար բացառիկ նշանակություն ունի նրա բառապաշարի ուսումնասիրությունը, որը երկի հիմնական առաջն է. նրա շինանկյունը: Պատմական որևէ ժամանակաշրջանի երանգավորումը ստեղծելու գործում կարևոր է նաև պատմավեպի լեզվի՝ մասնավորապես բառապաշարի դերը՝:

Պատմավիպասանը, հարազատ մնալով պատմականությանը, պատմական անցյալին հատուկ լեզվական իրողություններն ու օրինաչափությունները հարազատ է դարձնում իր ժամանակակիցներին:

Ս. Խանգադյանի պատմավեպերի բառապաշարը քննել ենք՝ առաջնորդվելով բառերի գործածության տարբեր ոլորտներով. ըստ այդմ բառապաշարը ներկայացվում է հետևյալ խմբերով՝ հնաբանություններ, օտարաբանություններ, նորաբանություններ, ժողովրդախոսակցական և քարբառային բառեր:

Խանգադյանի պատմավեպերի բառապաշարի մեջ առանձնահատուկ տեղ ունեն հնաբանությունները, որոնք հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի.

1. պատմաբաներ, որոնք անվանում են միայն տվյալ պատմական ժամանակաշրջանին հատուկ առարկաներ, հասկացություններ, երևույթներ: Բառերի այս խումբը հետագայում դուրս է եկել գործածությունից և չունի իր հումանիշ ձևերը ժամանակակից գրական լեզվի բառապաշարի մեջ, քանի որ այդ առարկաներն ու հասկացություններն արդեն գոյություն

¹ Տե՛ս Լ. Եզեկյան, Ռաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 68:

չունեն, կամ էլ նույն նշանակությունն արտահայտվում է ուրիշ բառի կամ բառերի միջոցով: Պետք է նշել, որ տվյալ բառերը պատմական նրանգավորում են ստեղծում և ձեռք են բերում տերմինի նշանակություն: Պատմաբաները գեղարվեստական ստեղծագործության մեջ օգտագործվում են միայն տվյալ ստեղծագործության բովանդակության անմիջական պահանջով: Նրանք մտնում են լեզվի ոչ գործուն բառաշերտի մեջ: Այս շարքի մեջ մտնող բառերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) Զենքերի, որսորդական և ռազմական պարագաների անվանումներ:

Ս. Խանգաղյանի պատմավեպերում հանդիպում են զենքի, ռազմական և որսորդական պարագաների հետևյալ անվանումները՝

Փայտյա բեռններից կախված էին հին զենքեր, ցուլի ու խոյի կումբերով վահաններ (ԹՂ, 58):

Մարի-Լույսը նկատեց, որ նա ետնագրահ կոթորով է (ԹՂ, 99):

Խեթ քրմերից ոմանք իրենց պարաստիկները լարում էին (ԹՂ, 109):

Նիզակներով, տապարներով, թերով և հրացաններով զինված խմբերը գիշերում էին քարափների վրա (ՄՍ, 349):

Ձեռքի մականը թեթևակի դողում էր (ՄՍ, 350), Բոլորն էլ նետ ու աղեղ ունեին... զինված էին գլուխները զամած մահակներով... (ՄՍ, 7):

Խանդամիրյանն ասաց, թե առաջներս վարազներ են դուրս գալու, իսկ վարուզին սովորական դիրմա մանրով չեն խփի (Շ, 240):

Ոմանք թամբի կեղը խրած լայնշեղք տապար են կրում (Շ, 104):

Աշտարակի հրակնատից մոլոխ քարի հոտը գրգռեց Մելիք-Աղամի քիմքը (Շ, 345):

Այս խմբի մեջ մտնող բառերից են նաև՝ խոյրակիր, լախտ կապարճ, խենջար և այլն:

բ) Զարդերի և հարդարանքի առարկաների, հագուստների անվանումներ: Այս տիպի բառեր պատմավեպերում շատ են հանդիպում: Այսպես՝

Նա հանեց իր ներմակ պարեգոտը և զցեց կնոջ ուսերին (ԹՂ, 5):

Նածիշները նրա ոտքերի մուկերը հանեցին (ԹՂ, 10):

Նրա սպիտակ պարեգոտները ծիացին, սալերի վրա աղմկեցին ոտքերի սանդղակները (ԹՂ, 11):

Նրանց հագին այծի մորթուց կարած բանկոններ էին, մազից գործած խոնջանավոր վարտիքներ (ՄՍ, 7):

Նրա գոտու ոսկյա ճարմանդին դաջված էր տոմսի զինանիշը (ՄՍ, 17):

Մելիքը հանեց պատմուճաճը (ՄՍ, 39): Թե կպչեն վարագույրներից կամ իր մատնեհատած ապարոշի շղարշին (Շ, 6): Թաղիքե կամ մաքենի գոակներով էին, ձորձից, քուրձից խորոզ հագած (Շ, 105):

Ես քո պարանոցից կկախեմ ոսկե մարջան (Շ, 134):

Գոակներ, ֆեներ, փաթթոցներ թոան վեր (ԽՂԼ, 3):

Զլուճիկի բոբիկ ոտքերը Ներսեսին հիշեցրին Օռլս Իլդիզի տոտիկները՝ արծաթեղիզ մոմակների մեջ (ԽՂԼ, 157):

Պատմավեպերում հանդիպում են այս խմբին պատկանող այլ բառեր, ինչպես՝ խիտոն, սարդեճ, ծարիր, կապա, արխայուղ, սուրմա, փաստակ, կան, խրիսա-մուշտակ, ջամեա շալ, շափյուղա, խոյր, լալ, շուրջառ, կնգուղ, փիլոն, քոշ, եմփորոն, լանջախաչ, քմփուշ, ճակատակաղ, բուսա, հասախի, բաշուղ, չարդաթ, շալիա, զուս, ֆինդ, կրճկան և այլն:

գ) Կենցաղի առարկաների, չափի միավորների, հարկերի, վարչական միավորումների, պաշտոնների, ինչպես նաև բույսերի անվանումներ: Այսպիսի բառեր ևս Խանգաղյանի պատմավեպերում շատ են հանդիպում: Այսպես՝

Նստած էր մարտակառքի օթոցին (ԹՂ, 3):

Տեղ-տեղ փարթամացել էին համպարի նուրբ թփեր (ԹՂ, 8):

Նգույրները ևս ցածրիկ էին՝ ծանրացած արծաթե ու ոսկե անոթներով (ԹՂ, 12):

Երկու մանկամարդ կին կոնքեր ու կապե ջրածիկներ բերին (ՄՍ, 9):

Տալիս ենք մելիքականը, կոռ ու բեկար էինք զնում (ՄՍ, 10):

Բազմատեսղն մի աշտանակ էր դրված վագրի մորթով ծածկված թախտի մոտ (ՄԼ, 29):

Ասպապ տիկինը ետ քաշեց իր ընդարձակ վրանը կիսող ոսկեճամուկ վարագույրը (Շ, 5): Նա ոսկեթել հյուսվածքով բարձեղ դրեց տապանակ գորգին (Շ, 5):

Խաներն ու սարթեփ, միրփանջ մեծամեծներն ամեն կողմից վազում էին դեպի ասպարանքի բակը (Շ, 70),

Ս. Խանգաղյանի պատմավեպերում հանդիպում են այս խմբին պատկանող այլ բա-

² Տե՛ս նույն տեղը, էջ 71:

ներ ևս, ինչպես՝ ջուր, ուռած, համհարզ, շեմակալ, տասանորդ, նաղդ, ջինս, կունակ, քոշք, ճիլի, ակուր, փսիաթ, խշտի, ծնծոա, քրեղան, օթակ, սեմ, դեփուր, լկամ, բրիշ, հեծ, ակիշ, քեղ, յոթնադի, թեղի, փանդիռ և այլն:

Ինչպես պատմավեպերի բառապաշարի ուսումնասիրությունն է ցույց տալիս, հնարանությունների պա խմբի մեջ մտնող բառերը ոչ միայն հայ ժողովրդի կենցաղից են վերցված, այլև նրա հարևան ժողովուրդների՝ պարսիկների, թուրքերի, որոնց հետ աճընդհատ շփման մեջ է եղել մեր ժողովուրդը:

Ս. Խանգաղյանի պատմավեպերում պատմական ժամանակաշրջանի երանգավորում ստեղծելու մեծապես նպաստել է պատմական Հայաստանի տեղանունների և անձնանունների, հատկապես հայոց ճիհ (մասնավորապես Սյունիքի և Արցախի) նախարարությունների, քեշխությունների ու մելիքությունների անունների օգտագործումը: Այսպես՝ «Մխիթար Սպարապետ» պատմավեպում հանդիպում են այդպիսի բազմաթիվ անուններ, օրինակ՝

Երեք օր առաջ՝ գիշերով, նրանք դուրս էին եկել Արցախի Գանձասար վանքից, ջահի աղոտ լույսի տակ համբուրել Աղվանից Եսայի Հասան Զապալան ծերունի կաթողիկոսի աջը (ՄՍ, 4):

Շուտով երևացին Սյունիքի ձյունաբարդ լեռները՝ սպիտակաթափ Կապուտ-ջիղը, գոռոզ Արամազդը, Գագրայը, երկինք կրթողած Խուստուպն ու մեմակ, մոայլ, ասես խոով, իշխան Մեծը (ՄՍ, 4):

Խոջաներ էին եկել Ագուլիսից, Դաշտից, Քաղաքիկից, Դիզակից: Այդտեղ էին նաև Մեղոր գորապետներ Կոստանդինն ու Սարին (ՄՍ, 105):

Այս պատմավեպում հանդիպում են նաև բազմաթիվ այլ անվանումներ՝ Վարանդա, Հալիձոր, Ջագեձոր, Շող, Պղնձաքար, Շամախի, Գյուլիստան, Խաչեն, Ջրաբերդ, Վայոց ձոր, Ծինուհայր, Դավիթ բեկ, Մխիթար Սպարապետ, Տեր-Ավետիս, Բայանդուր իշխան, Հովհաննես Հունդիբեկյան ևն:

Քանի որ «Շուշի» պատմավեպը թե ժամանակագրական, թե ազգային-ազատագրական պայքարի առումով «Մխիթար Սպարապետի» շարունակությունն է, ուստի հիմնականում նույն պատմական անվանումները հանդիպում են նաև այստեղ, միայն ավելանում են նոր պատմական անձնավորությունների անուններ:

«Խուսեք, Հայաստանի լեռներ» պատմավեպում Արևմտյան Հայաստանն է՝ իր լեռներով, ձորերով, դաշտերով, գետերով և, իհարկե, հերոսական ժողովրդով: Այստեղ հանդիպում ենք բազմաթիվ պատմական անվանումների, այսպես՝ Երզնկա, Ակնովիտ, Ջեկետ, Սփրաս, Գոհանամար, Երասխ, Ալաշկերտ, Սարիղամիշ, Կարսակն և այլն:

2. Հնարանությունների երկրորդ խմբի մեջ առանձնանում են գրաբարյան այն բառերը, որոնք լեզվի զարգացման ընթացքում փոխարինվել են նոր ձևերով, այսինքն՝ հակառակ առաջինների, աշխարհաբար գրական լեզվում ունեն իրենց զուգահեռ, հոմանիշ ձևերը, բայց հեղինակն օգտագործում է հին ձևը՝ ոճական նպատակադրումով: Եթե հնարանությունների սուաջին խմբի բառերը հեղինակն օգտագործում է՝ ելնելով անհրաժեշտությունից, քանի որ այդ բառերը չունեն իրենց համարժեքները, ապա երկրորդ խմբի բառերը զուտ ոճական երանգավորում են ստեղծում³: Այս կարգի բառեր Խանգաղյանի պատմավեպերում օգտագործվում են և՛ հեղինակային, և՛ հերոսների խոսքում: Հնարանությունների այս խմբի մեջ կարելի է դասել հետևյալ բառերը՝

Նրանք գարի, կորեկ, խեցի և այլ սպրանքներ էին տանում լեռները՝ խաշնարած ցեղերի վաչերում մթերքների հետ փոխանակելու (ԹՀ, 5):

Խոշոր քարերից ակուր էին շինել ձկնորսները (ԹՀ, 37):

Թագուհու մարմնով սառը դող անցավ. մի՞թե իմ կառավար ու աստղաբան Տաղի Հուսակն ինձ փոխել է (ԹՀ, 136):

Մուռումուռ գուլակների վրա զինվորներ երևացին (ՄՍ, 40):

Դուք այնքան անհրզ ու պղերզ եք, որ արծանի եք դրան (ՄՍ, 311):

Այստեղից մի ավուր ճանապարհ է (ՄՍ, 543):

Քո արևշատության համար է աղոթում տիվ ու գիշեր (Ծ, 31):

Եվ դրանից է, որ հաճախ չարիքներ հասան մեզ ու կալան ամենայն աշխարհս (Ծ, 9):

Գերասիմ վարժապետը գայթում է հաճախ (ԽՀԼ, 36):

Պատմավեպերում հանդիպում են այս խմբին պատկանող այլ բառեր ևս, օրինակ՝ կինն, հոշեկ, հանապազ, տաղտապիլ, փայելկ, համալ, ազուգա, հայրնկոյս, զեննը, աղբյուս, խըստոր, տանակ և այլն:

Պատմավեպերի բառապաշարի մյուս շերտը օտարաբանություններն են: Այստեղ խոսքը վերաբերում է այն օտար բառերին, որոնք ստանում են ոճական արժեք, քանի որ դը-

³ Տե՛ս Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 82:

րանք հիմնականում պարսկերեն, թուրքերեն և ռուսերեն բառեր են, և հեղինակը դրանք օգտագործելով՝ ստեղծում է համապատասխան պատմական միջավայր. դա պարսկական արքունիքն է, թուրքական բանակն ու փաշայի նստավայրն են, թուրքական գյուղն ու քաղաքն են՝ իրենց կենցաղով, ռուսական զինվորական կայազորն ու նստավայրն են և այլն:

Բառապաշարի այս շերտի տակ մենք նկատի ունենք ոչ թե հիշյալ լեզուներից կատարված փոխառությունները, որոնք անվիճելիորեն մտնում են հայոց լեզվի բառապաշարի մեջ, այլ այն բառերը, որոնք հայերենի բուն բառապաշարի մեջ չեն մտնում, բայց հեղինակն օգտագործում է դրանք ոճական հատուկ նպատակներով՝ տեղի, միջավայրի համագիշերանգավորում ստեղծելու համար, երբեմն էլ հայոց լեզվի մեջ չգտնելով նրանց համարժեք, համապատասխան բառաձևերը:

Բերենք համապատասխան օրինակներ՝

Այդպես էր գրված ձեր Դուրանի մի այեռում (ՄՍ, 154):

Դու և պատկերահան իմաստուն ես

Հուշտի ֆրիանի պես, և շահիր՝ Հաֆեզի քաղցրությամբ (ՄՍ, 155):

Մյուս օրը գնացին Նադիր խանին սալամի (Շ, 74):

Նադիր շահը եկավ շքեղ զուգած մծույցի վրա, հետը շահական դարողան, իր անձնական թուփդարը: Ջորիների վրա եկան նաև մի քանի դազի ու դոնլուդբաշի խաներ (Շ, 82):

Մոլլան իր ազանը խրում էր քաղաքի ականջը (ԽՀԼ, 61):

Գերմանական քաղցրավենի՜ն բուրում էր թուրքական կծու բեշբարմակի մոտ (ԽՀԼ, 14):

Այս խմբի մեջ մտնող բառերից են նաև, օրինակ՝ էլչի, յուզբաշի, քասիդ, ապա, բեյթ, օղուլ, վաքան, նայիբ, սերասկյար, բախշիշ, բագրօյան, սառաֆ, նոքար, լուպաքաբար, դուրբան, արբար, շարբար, քեննաթ, դուրուշ, քեշիշ բաբա, բեկլարբեկ, դումբար, դարգիխանա, իքբալ, դոկլաթ, ռահամ, դարաղան, թուլիդար, դազի, դոնլուդբաշի, խաբարդար, բոջախլու, սանջախ ի շերիֆ և այլն:

Նշված բառերի օգտագործումը նման դեպքերում անհրաժեշտ է, քանի որ այդ իմաստները այլ անվանումներով արտահայտել հնարավոր չէ, բացի դրանից՝ փոխարինելու դեպքում ընկնում է խոսքի պատկերավորությունը: Այս օտար բառերի օգտագործմամբ Ս. Խանգաղյանը ներկայացնում է յուրաքանչյուր ժողովրդին հատուկ կենցաղը, սովորություններն ու բարքերը: Հեղինակը հատկապես վարպետորեն է ներկայացրել պարսկական շահերի ու խաների արքունիքները:

Այսպես՝ «Շուշի» պատմավեպում մեկը մյուսին են հաջորդում պարսիկ շահերը՝ իրենց զանազան սովորություններով ու բարքերով: Պատմավեպում օգտագործված են բազմաթիվ շահերի անուններ, որոնք պատմական դեմքեր են եղել, ինչպես՝ Վալիմամար Նադիր խան, Իբրահիմ շահ, Ջեմալ Բերիմ շահ, Փաթալի շահ և այլն:

Հայոց լեզվի բառապաշարի անկապտելի մասն են կազմում նաև նորաբանությունները՝ իրենց հնչյունական կազմով և իմաստով բոլորովին նոր բառերը, որոնք առաջին անգամ են գործածվում լեզվում: Իբրև առանձին խոսք, նորաբանությունների մեջ առանձնանում են հեղինակային նորակազմությունները: Այս կարգի բառերը գլխավորապես կազմվում են հեղինակների կողմից գեղարվեստական ստեղծագործության ոճավորման և այլ նպատակներով, որոնք, սակայն, սովորաբար լայն տարածում չեն գտնում և մուտք չեն գործում լեզվի բառային կազմը՝

Ս. Խանգաղյանի պատմավեպերում գործածված նորակազմ բառերից են՝ արձակարան, մաքենի, թովպետ և այլն:

Ժողովրդախոսակցական և բարբառային բառերը ևս յուրաճատուկ տեղ ունեն Ս. Խանգաղյանի պատմավեպերում:

Ինչպես հայտնի է, ժողովրդախոսակցական լեզվի բառերի մի մասն արդեն մերժված է գրական լեզվից, մյուս մասը գրական լեզվում գործածվում է խոսքին որոշակի երանգ հաղորդելու համար, բայց բոլորն էլ, ընդհանուր առմամբ, ժողովրդախոսակցական լեզվի բառեր են, որոնք գրական լեզվի խոսակցական տարբերակում էլ արդեն սովորական չեն, իսկ մի քանիսը, ընդհանրապես, աստիճանաբար ավելի ու ավելի գործածական են դառնում և հավանական է, որ ժամանակի ընթացքում չեզոք շերտին անցնեն⁴: Խոսակցական լեզվին քնորոշ բառերը գործում են մեր լեզվի տարբեր բարբառներում և ոլորտներում,

⁴ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982, էջ 204—205,

⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Է. Հոսայան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա. պրակ. Երևան, 1980, էջ 318:

դրանով իսկ հակադրվում արդեն ընդհանուր ճանաչում գտած գրական լեզվի համակարգի մեջ մտած ձևերին⁶:

Ժողովրդախոսակցական բառերի օրինակներ բերենք պատմավեպերից՝

Նուարը մի-մի բլիթ դրեց նրանց ծնկներին, ապա քրեղանով խաշած բակլա ու գա-րու ջուր մատուցեց (ԹՂ, 113):

Գլխավոր գորավարը ստուգեց կնիքները, հավաստիացավ, որ կեղծ չեն, ապա թոքա-լով՝ կոկորդը մաքրեց (ԹՂ, 34):

Վճռվեց ծիսական տոնը կատարել միայն Մածան-Արամազդի տաճարում, կղպած պու-հիլ Ծանթի տաճարը (ԹՂ, 47):

Տիկին Սաթեմիկը բռնեց թամբի կեղև ու արտասվեց (ՄՄ, 52):

Ինչո՞ւ բուցրեց ճրտ մելիք Թուրինջին (ՄՄ, 36):

— Դժոխքի խորքն ընկնեն,— լափփեց Բարխուդարը (ՄՄ, 52):

Գիշերը խուլ ու խոժոռ թազնել էր աշխարհի վրա (Շ, 317):

Հևաց թանջելով՝ նստեց մահճակալին, ծնկները տրորեց (Շ, 207):

Նրանց վրայի ձյան հավալը շողաց (Շ, 210):

Երգնական եռմեռում էր փողոցների խեղդվածքում (ԽՀԼ, 9):

Ամեն երեկո իր աղոթքն այս խոսքերով է կշկոում Ծամոսկի մարեն (ԽՀԼ, 44):

Խաղողի թփերի մեջ գաղված Արևը կարծես մեռել էր գիշերային լռության ահից (ԽՀԼ, 73):

Այս խմբի մեջ մտնող բառերից են նաև՝ խանճառ, դոկիկ, մրափել, աչքահուպ, ջրա-կուր, վրասոթ, փապառ, մարդախոշոշ, ափաշկարա, ժամգառք, ջահանդամ, լանգառք, գի-խանճ, սարսաղություն, խիլայել, դալամբար, բեղամաղ լինել, բար, ընկուճ, ճզվտալ, սվաճվանք, չաթոճ, վրթալ, հավալասան, տակտահան և այլն:

Ժողովրդախոսակցական բառապաշարի մեջ են մտնում նաև կրկնավոր հարադրական բարդությունները, որոնց միջոցով հեղինակի և հերոսների խոսքերը դառնում են արտա-նայտիչ, իսկ պատկերավոր երևույթը՝ ավելի շոշափելի և իրական: Կրկնավորները լայն կի-րառություն ունեն արձակի լեզվի բառապաշարի համակարգում: Կրկնավոր հարադրական են կոչվում այն բարդությունները, որոնք կազմվում են վերլուծական եղանակով, նույն բառի կրկնությամբ: Կրկնվում են սովորաբար միավանկ կամ կարճ բառերը, գրվում են անջատ, ինչպես հարադրական բարդությունները, և բաղադրիչ-բառերը պահպանում են իրենց շեշտը: Կրկնավոր բաղադրիչ-բառերի միջև երբեմն ընկնում են ու կամ և շաղկապ-եղեր, ինչպես նաև գրաբարյան նախդիրները: Որոշ կրկնավորների բաղադրիչներից մեկը ենթարկվում է հնչյունափոխության⁷:

Կրկնավոր բարդություններն արտահայտվում են տարբեր խոսքի մասերով.

1) Գոյականների կրկնությամբ կազմվում են ածականներ և մակբայներ: Ս. Խան-գադյանի պատմավեպերում հանդիպում են այդպիսի կրկնավորներ: Այսպես օրինակ՝ Խորոված կինճը բերին ու մաս-մաս հոշելով՝ դրին Արթուկ Պերճի առջև՝ ճյուղից հյու-սած սերիկի վրա (ԹՂ, 328):

Սիրտս փերթ-փերթ է, կարկատենք (ԹՂ, 74):

Խրտացին ժայռերի մեջ որջ-որջ կորած թաղերը (ՄՄ, 40):

Զվածեղն էլ կեր, խեծն էլ, առավոտ-առավոտ մարսական են (ՄՄ, 167):

Այն պահին, երբ օսմանյան բանակը քաղաքի դարպասներով ալիք-ալիք մտնում էր Հալիճոր (ՄՄ, 704):

Արևդ սիրեմ, Հայաստան... բախտդ բուռ-բուռ է, քարդ՝ հեղեղ-հեղեղ (Շ, 28):

Այս ինչ ծավալ-ծավալ է հայ կնոջ լացի ծովը (Շ, 99):

Ոչխարներ էին մորթել, միս խաշլամա արել, կույտ-կույտ փափուկ հաց դարսել ու-տիկանների առջև (ԽՀԼ, 98):

Լեռը աշնանային լերկ էր, ձվածիր դաշտը դեղին մահիճ՝ մեջը ծավալ-ծավալ Եփրատը (ԽՀԼ, 4):

Զին խրտնեց եզների գերան-գերան կոտոշներից (ԽՀԼ, 27):

Կին թե աղջիկ՝ սպիտակ գգեստներով, ծաղկել էին լեռնալանջին՝ թուփ-թուփ կամ ցը-րիկ (ԽՀԼ, 136):

Այս խմբի մեջ մտնող կրկնավորներից են նաև՝ բլուր-բլուր, փշուր-փշուր, խամբ-խամբ, պատառ-պատառ, կուտակ-կուտակ, շերտ-շերտ, կտոր-կտոր, պորթ-պորթ, ալիք-ալիք, կը-ծիկ-կծիկ, ճեղք-ճեղք և այլն:

⁶ Տե՛ս Լ. Եզեկյան, ճշվ. աշխ., էջ 92:

⁷ Տե՛ս Ա. Մուրիսյան, ճշվ. աշխ., էջ 299:

Այս խմբի կրկնավորներն ավելի շատ գործածված են «Խոսք, Հայաստանի լեռներ» պատմավեպում:

2) Ածականների և մակբայների կրկնությամբ սաստկանում է բառի իմաստը, միջոց է հասկապես ընդգծելու երևույթի կարևորությունը, հերոսների հուզական վիճակը, գործողության բնույթը: Այսպես՝

Գնդերը կազմվեցին կարգվեցին **խիտ-խիտ** ուզմակարգով (ՄՄ, 591):

Ստեպ-ստեպ ներս մտնող ծերուցի վիրաբույժը նրանց ակնարկում էր, թե ժամանակն է հանգիստ թողնել հիվանդին (ՄՄ, 488):

Ի՞նչ կա,— զայելով սրտի զգացմունքները՝ **չոր-չոր** հարցրեց Մովսեսին (ՄՄ, 457):

Լայն փողոցներում **ծանր-ծանր** քայլող գունդերը **ծուլ-ծուլ** քաշում էին նոնշացող սայլեր (ՄՄ, 277):

— Արի, արի, նոր եմ կովը կթել, **տաք-տաք** կաթ խմիր (ՄՄ, 166):

Քրտիները **թոր-թոր** բնկնում էր նրա ճակատից (Ծ, 108):

Տիրալիները հազիվ էին ոտք դրել սարահարթին, հազիվ թարմացել կանաչի վետ-վետ բույրով (ԽՀԼ, 449):

Լուսաբացի գունատության մեջ Հեղինեն **փոքրիկ-փոքրիկ** էր երևում (ԽՀԼ, 406):

Սակայն թափառական բանակները **խիտ-խիտ** բռնել էին ջրբաժանը (ԽՀԼ, 399):

Այս խմբի մեջ մտնող բառերից են նաև՝ **մեծ-մեծ, տաք-տաք, շատ-շատ, լաս-լաս, երկար-երկար, թրև-թրև, թեզ-թեզ, շտապ-շտապ** և այլն:

3) Թվականների և դերանունների կրկնությամբ կազմվող կրկնավորները սովորաբար արտահայտում են բազմակիություն, ինչպես նաև քաշխական նշանակություն և առանձնակիության իմաստներ: Օրինակ՝

Խոր շունչ քաշեց, լռեց, **մեկ-մեկ** նայեց յուրայիններին, ու նորից մի անգույն ժպիտ անցավ նրա դեմքով (ՄՄ, 510):

Օրը ճեղքվում էր **այստեղ-այտեղ** բռնաբարվող աղջիկների աղաղակներից (Ծ, 122):

Եթե իճճ ապանեն, իմացիր, իմ մարդիկ քեզ ու քո զավակներին կրսկի վրա կվառեն **ողջ-ողջ** (Ծ, 357):

Տրապիզոնի նահանգապետը... իր ձեռքով քարափի գլխից **մեկիկ-մեկիկ** նետել է ծովը (ԽՀԼ, 351):

Քրմերը **մի-մի** զանաճ կուռք հանեցին իրենց մախաղներից (ԹՀ, 111) և այլն:

4) Հնչյունափոխությամբ կրկնավոր հարադրական քարոչություններում հնչյունափոխվում կամ հնչյունի կորուստ է կրում կրկնվող բաղադրիչներից մեկը: Կամ էլ բաղադրիչների միջև առաջանում է հավելյալ հնչյուն: Կրկնավորների մի տեսակ է նաև հնչյունական կազմով ու իմաստով նույն կամ մոտ քառերի կրկնությունը, երբ կրկնավորի երկրորդ բաղադրիչը որոշ չափով ձևափոխված է: Այս կրկնավորների առանձնահատկությունն այն է, որ հիմնականում ընդարձակվում է բառի բառային իմաստը, քառը ձեռք է բերում հավաքական, բազմակիության ավելի լայն նշանակություն⁶: Այսպես՝

Փիշերով-գիշերհաճա գլուխ են քերել, ի՞նչ է (ՄՄ, 185):

Մարմնի մի կեսը՝ աղջիկը **ճիպ-ճերմակ** էր (Ծ, 102):

Հենց հիմա **շալա-շուլաները** հավաքեցեք (Ծ, 103):

Հազարապետ Թուրի Արզումանը **մեն-մենակ** թիկն էր տվել խրճիթի առջև, ծիրանի ճառի (Ծ, 360):

Ձեռքերն ու դեմքը ցրտից կոշտացել, կաս-կարմիր էին (ԽՀԼ, 323):

Բեճիամինը հոր կեսն է՝ **թուխ** մազերով, **ճի-ճկուն** (ԽՀԼ, 45):

Թուխ-մուր երեսով, կզակը կացնի շեղք Ջիլ Ջաքարը քավական երիտասարդ էր (ԽՀԼ, 6):

Հուսահատ նայում էր երկու փոքր երեխաներին, մի **բուռ-բրդուռ** դարձած կնոջը (ԽՀԼ, 85):

Ս. Խանգաղյանի պատմավեպերում շատ են գործածված ժողովրդական ծագում ունեցող այն կրկնավորները, որոնց գոյականով արտահայտված բաղադրիչներից մեկը դրվում է թեք հուղվաձևով:

Օրինակ՝

Իրա համար ուտում խմում էր... **օր օրի** էլ անհիժածը քացվում, ծաղկում էր (ՄՄ, 129):

Արահետն ի վեր՝ **կողք կողքի** բարձրանում էին ձիավոր Ծամամն ու Ահարոնը (ՄՄ, 184):

Միրանիների խիտ այգու մեջ, որ հենց պարիսպների տակ էր, **ճակատ ճակատի** դեմ առանք հիսուն-վաթսուն **թուրք** զինվորների (Ծ, 127):

⁶ Տե՛ս Ա. Սուրիապյան, նշվ. աշխ., էջ 301:

Հարդարեց ազգ ազգի երանգներով (Շ, 55):

Ժողովրդախոսակցական բառապաշարի անկապտեյի մասն են կազմում դարձվածքները. առածները, ասացվածքները, անեծքները, օրհնանքները և թևավոր խոսքերը: Դրանց միջոցով գորղը հասնում է ստեղծված իրադրության կամ պատկերի տեսանելիությանը, հերոսների խոսքը դարձնում ավելի խոսու՛ձ ու կենդանի, բնութագրում է հերոսների մտածելակերպը, աշխարհայացքը, հոգեբանությունը, ցույց է տալիս ժողովրդի իմաստությունը, խորաթափանցությունը: Ժողովրդախոսակցական լեզվի այս միավորները շատ են հանդիպում քննարկվող պատմավեպերում: Այսպես՝

Ծան քիթը մսի հոտ չպիտի գցել (ԹՂ, 98):

Լեղիդ քերանի՞դ հասավ (ԹՂ, 102):

Կրունկիդ աղ արա ու շտապիր (ԹՂ, 129):

Գիշերամուկն արև չի սիրում, բայց դրանից արևը չի դադարում լուսավորելուց (ԹՂ, 349):

Անմատչելի է իշխանություն ունեցող կնոջ հոգին: Նրանից պետք է հեռու լինես, ինչպես օձից (ԹՂ, 356):

Տեսնենք՝ ում մայրը տղա կբերի (ԹՂ, 369):

Դավաճանի վրա լաց լինողը ընկերակից է նրան (ՄՍ, 28):

Եթե մեկն ինձ ասեղով ծակի, ես նրա սիրտը մախաթ կխրեմ, հա... (ՄՍ, 65):

Անպատված կինն ավելի ահարկու է լինում, քան տափաստանի վագրը (ՄՍ, 98):

Հոնքը շինելու տեղ, աչքը կթափենք (ՄՍ, 132):

Ականջիդ օղ արա ասածներս (ՄՍ, 245):

Ծան հետ ախպերացիր, բայց ճիպտը ձեռքիդ մի գցիր (ՄՍ, 161):

Պատավ շանը քուչի-քուչի չեն անի (ՄՍ, 290):

Մասնատված ջուրը շուտ է ցամաքում, որքան էլ գետը վարար լինի (ՄՍ, 304):

Ձորը դատարկ, աղվեսը՝ խան (ՄՍ, 561):

Արևդ սիրեմ, Հայաստան, բախտդ բուռ-բուռ է, քարդ՝ հեղեղ-հեղեղ (Շ, 28):

Մանր անձրևից էլ է հեղեղ ծնվում (Շ, 201):

Էշ նստելը մի կորուստ ու պախարակություն է, էշից իջնելը՝ կրկնակի (Շ, 206):

Ո՛վ է հասկանում, թե ում մահակն ում քամակն է: Մահակն երկու ծայր ունի (Շ, 395):

Ծանր կարմիր խնձոր է ուղարկել մեզ (Շ, 348):

Ասում են՝ թոկե՛ երկարն է լավը. խոսքի՛ կարճը (Շ, 365):

Մկան շեղը, պսոսն են՝ ջրադացի ջրին օգուտ է (Շ, 459):

Ավանակի վերջը գայլի փորոսն է (ԽՂԼ, 61):

Նոխազը քարայծի հոտին է գնում (ԽՂԼ, 9):

Գետն ընկածը ձեռքը օձին էլ է գցում (ԽՂԼ, 116):

Մինչ աղը հասնի, մատաղը կսպառվի (ԽՂԼ, 57):

Լացը լաց է բերում (ԽՂԼ, 208):

Ժիշտ են ասել, թե ուղտի պարը կամրջի վրա է բռնում (ԽՂԼ, 473):

Ծունը տերը չի ճանաչում (ԽՂԼ, 485):

Հայոց գրական լեզվի բառապաշարում կան բառեր, որոնք գործածության ավելի սուբմանավանկ շրջանակներ ունեն: Դրանք հայերեն տասնյակ բարբառների բառերն են:

Գեղարվեստական գրականության մեջ խոսքը ոճավորելու նպատակով գորղները հաճախ դիմում են բարբառային բառերի օգնությանը: Անշուշտ, դա արվում է թեմայի ընտրությունից ելնելով՝ տեղի, միջավայրի երանգավորում ստեղծելու, հերոսներին տիպականացնելու նպատակով:

Բարբառային բառերը, հակառակ ժողովրդախոսակցական լեզվի բառերի, գործածվում են միայն մեկ կամ մի քանի բարբառներում կամ խոսվածքներում և հասկանալի են միայն տվյալ միջավայրում: Այս խմբի բառերը, որոնք հանդիպում են և հեղինակային, և հերոսների լեզվում, հիմնականում օգտագործվում են ոճավորման նպատակով:

Այդպիսի բառերի գործածությունը տեղին է՝ կապված տվյալ միջավայրի երանգավորման հետ, քանի որ, ինչպես նշում է Լ. Եզեկյանը, գեղարվեստական երկի լեզվի առանձնահատուկ կողմերից մեկն էլ այն է, որ ի տարբերություն գրական լեզվի, որն ավելի շատ մշակված, կատարելագործված և նորմավորված համակարգ է, համեմատաբար ազատ է խիստ պարտադրող քերականական օրենքներից ու ձևերից: Այստեղ լեզվական «շեղումները» որոշ դեպքերում հնարավոր են, անհրաժեշտ և պայմանավորված են ոչ

⁹ Տե՛ս Հովհ. Թումանյան, Երկեր, հ. 4, Երևան, 1959, էջ 118:

միայն նյութի կամ ոճի թելադրանքով, այլև հեղինակի մտածելակերպով ու ինքնատիպությամբ¹⁰:

Ս. Խանգաղյանի պատմավեպերում կան մի շարք բարբառային բառեր, որոնք հանդիպում են և հեղինակային խոսքում, և հերոսների: Այսպես, օրինակ՝

Նախ աղջիկներ բեր, որ կճել իմանան (ԹՂ, 74):

Որ քո խոխորդին պարան դնեմ ու տանեմ ինձ ծառա (ԹՂ, 148):

Մարդկային այդ զանգվածը կոնգոռոնում էր ցրտից (ԹՂ, 258):

Սպասավորները պատգարակի վրա մի տուն բերին (ՄՍ, 87):

Հիմա ուզում եմ տեսնել քո ամարաթը (ՄՍ, 117):

Սազանդարը ծորում էր հեշտագրգիտ մի երգ (ՄՍ, 256):

Նա վերցրեց ունկը կոտրած, լանջը կոծկած պեճձիկն ու զնաց ջրի (ՄՍ, 230):

Սրա շենակային կախված էին հովազի ժանիքներ, բորենու կարկաժներ (ՄՍ, 8):

Նա իր կոռեճությամբ անօրեն ղզբաջից էլ դաժան է (ՄՍ, 11):

Եկ իմ քոյր սուլքերը... քեզ հիպա անեմ՝ կտակեմ (Ծ, 488):

Ընդարձակ քոչքում օղը տաք էր ու ծանր (Ծ, 87):

Կիրճի կղերսուճքներում ծպտված հետախույզ աչք-ակամջները իրար ետևից հասան (Ծ, 27):

Գազե լամպը քիթը ցից տնկվել էր պղնձե ճկիկի վրա (ԽՂԼ, 37):

Պատմավեպերում հանդիպում են նաև բարբառային հետևյալ բառերը՝ կնճճնճալ, ոնխ, ջուղաք, դոշուն, սաթար, քոնագ, դերբուկ, պնդոց, հուրիմալաք, քաշաթուխա, մուլք, բամբաբու, աքրավա, քրտնաթուրջ, արգ, կարկաջ, դաչտղ, պիճիկ, աղուզահար, մասան, բիմբեռ, բամբառակ, բերինջ, ազար, օմբա և այլն:

Ինչպես պատմավեպերի ուսումնասիրությունն է ցույց տալիս, բարբառային բառեր ասվե՛ի շատ գործածված են «Միթթար Սպարապետ» և «Ծուշի» պատմավեպերում, որտեղ պատկերված են Սյունիքի և Արցախի ժողովուրդների կյանքն ու կենցաղը, իսկ ավելի սուկավ՝ մյուս երկու պատմավեպերում:

Այսպիսով, Ս. Խանգաղյանի պատմավեպերի բառապաշարը հարուստ է ու բազմազան: Դրանք բառեր ու արտահայտություններ են, որոնց մեջ խտացված են մեր ժողովրդի ոգին, դարավոր փորձն ու մտքի խորությունը:

Հերոսի հոգեկան ապրումները բացահայտելու, ժողովրդի կենցաղն ու սովորությունները նկարագրելու համար հնարանությունների, ժողվրդական ու բարբառային բառերի, բառաձևերի, հարադրությունների, դարձվածքների ու ասացվածքների ընտրությունը համահնչյուն ու հարազատ է ժողովրդին:

Р. Г. МАРКАРЯН— Особенности лексики исторических романов С. Ханзадяна.— В статье исследуется лексика романов («Мхитар Спарпет», «Шуши», «Царица Армении», «Заговорите, горы Армении») видного армянского писателя Серо Ханзадяна, руководствуясь различными сферами употребления слов. Лексика представляется в следующей градации: архаизмы, заимствования, неслогизмы, народно-разговорные и диалектные слова.

¹⁰ Տե՛ս Լ. Եզեկյան, Հր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, 1986, էջ 19: